



Հաղորդագրություն

Թարգմանչաց եւ Հայ Ուսուցիչի Տոներու Նշում Միտնիի Ս. Յարութիւն Եկեղեցոյ Մէջ

15 Հոկտեմբեր 2017ին Գերաշնորհ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեան, բարեխնամ Առաջնորդ թեմիս, Թարգմանչաց Տոնին առթիւ մատուցեց Եպիսկոպոսական հանդիսաւոր Պատարագ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ: Այս առիթով Առաջնորդարանի կազմակերպութեամբ նշուեցաւ Ուսուցիչներու Օրը, մասնակցութեամբ հայկական ամենօրեայ եւ միօրեայ վարժարաններու մէջ պաշտօնավարող 54 ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Յընթացս Սուրբ Պատարագին ուսուցիչները ստացան հաղորդութիւն: Տեղի ունեցաւ Ուսուցիչներու օրհնութիւն: Սրբազան Հայրը իր քարոզին մէջ յիշեց Թարգմանչաց սերունդը, ծանրացաւ Հայ գիրերու գիտին անկիւնադարձային կարեւորութեան վրայ, «Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ Աստուած հայերէն սկսաւ խօսիլ Հայուն հետ» ըսաւ Սրբազան Հայրը: «Թարգմանչաց փառանքը լուսաւորեց Հայ միտքը, Հայ ճգնաւորը հայերէնի վերածեց Քրիստոնէայ գրականութիւնը եւ զայն մատչելի դարձուց Հայ զարգացած սերունդներուն: Այսօրուան Թարգմանիչները դուք էք սիրելի ուսուցիչներ, դուք էք պայքարողները հայութիւն սերմանելու մեր մեծցող սերունդներուն մէջ» եզրափակեց Սրբազան Հայրը: Ճաշու գիրքը կարդացին ամենօրեայ վարժարաններու երկու տնօրէնները՝ Պարոն Մանուկ Տէմիրճեան՝ Հայերէն եւ Պարոն Էտի Տէմիրճեան՝ Անգլերէն լեզուներով:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, ուսուցիչները հրաւիրուեցան Էտկարեան Սրահ եւ ճաշի հիւրերը եղան Ս. Յարութիւն Եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբին: Սրբազան Հօր կողքին հանդիսութեան ներկայ էին Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանը, Ս. Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ Պրն Պետրոս Զօրլուն եւ Դիւանապետ Նշան Պասմաճեան:

Հանդիսավար Նշան Պասմաճեան ներկայացուց օրուան բանախօս Տիկնի Իրինա Ղուկասեանը որ Հայ Կաթողիկէ Լոյս շաբաթօրեայ եւ Համազգային Գօլտըն Ճեմարանի Հայերէն լեզուի ուսուցչուհի է: Տիկնի Ղուկասեան ներկայացուց հայերէնի ուսուցման դժուարութիւնները Աւստրալիոյ մէջ եւ իր պատրաստած մեթոտները, որոնք Գօլտըն Ճեմարան որդեգրած է, որովհետեւ դասական հայերէն ուսուցման մեթոտները ժամանակավրէպ են: Տիկնի Ղուկասեան բացատրեց թէ իր եւ զինք նախորդող սերունդները չունէին այն դժուարութիւնները գորս կը դիմագրաւէ այսօրուան ուսուցիչը: Ան խօսեցաւ ծնողներու խաղալիք դերին մասին եւ իր ընդհանուր գործադրող ծրագիրը ներկայացուց գործնական, մտածուած օրինակներով: Ուսուցիչները Գօլտըն Ճեմարանէն, ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանէն, Համազգային Թումանեան, Թարգմանչաց, ՀԲԸՄ Ալեք Մանուկեան եւ Հայ Կաթողիկէ «Լոյս» շաբաթօրեայ վարժարաններէն, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցոյ Կիրակնօրեայ Վարժարանէն հետաքրքրութեամբ հետեւեցան ներկայացուած գիտելիքներուն: Իրենց սրտի խօսքերը արտասանեցին Թարգմանչաց վարժարանի տնօրէնուհի Տիկնի Զարուհի Մանուկեան, Գօլտըն Ճեմարանի եւ Ալեքսանտր վարժարանի Տնօրէններ ՊՊ Էտի Տէմիրճեան եւ Մանուկ Տէմիրճեան ինչպէս նաեւ Կրօն դասաւանդող ուսուցչուհի՝ Տիկնի Շաքէ Վարդանեան:

Իր եզրափակիչ խօսքին մէջ Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց Տիկնի Ղուկասեանի կատարած ախտաճանաչման եւ գործնական առաջարկներուն համար եւ քաջալերեց այսօրինակ արհեստավարժութեամբ տանիլ մեր աշխատանքը: Ան բարձր գնահատեց մեր ուսուցիչներուն տարած անգուգական աշխատանքը ի նպաստ հայակերտման աշխատանքին: Երկու ժամ տեւողութեամբ հաւաքը փակուեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով:

Դիւան Առաջնորդարանի
Միտնի, 17 Հոկտեմբեր 2017